

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱԶ Մանվել Մաթևոսյան Վահանի-ն ԱՄՄՀ-ԷԱՃԱՊԶԲ-24/63 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի         |  |
|-----------------|----------------------------|--|
|                 | արտադրողի անվանումը        | տեխնիկական բնութագիրը  |
| 1               | Մանվել Մաթևոսյան Վահանի ԱԶ | <p>Ղեկավարի գրասեղան՝ պատրաստված կլինի ամբողջովին եռաշերտ 18մմ հաստությամբ լամինատից, եզրերը պատված կլինեն 6սմ հաստությամբ ՄՃՓ-ի պրոֆիլներով: Սեղանի երկարությունը 170 սմ, լայնքը՝ 80սմ, բարձրությունը՝ 70սմ: Գրասեղանի դիմային հատվածը ամբողջովին կլինի փակ: Գրասեղանը կունենա երկու կախովի կամ ամրացված շարժական դարակներ, դարկներից յուրաքանչյուրի արտաքին չափը՝ լայնությունը՝ 38սմ, բարձրությունը՝ 15սմ: Գրասեղանի հավաքածուն ներառում է նաև դիմադիր սեղանը, կողադիրը և գրապահարանը: Կողադիրի չափսերը՝ Ե80*Բ60*Խ40*սմ, 18մմ հաստությամբ լամինատից պատրաստված (վրադիր հատվածը՝ երկշերտ, եզրերը պատված կլինեն 3.6սմ հաստությամբ ՄՃՓ-ի պրոֆիլներով) բաժանված երկու մասի՝ ձախ կողմից մեկ դուռ (արտաքին չափերը՝ Լ34*Բ50սմ), ներսի հատվածը բաժանված հավասար երկու հատվածների, իսկ աջ կողմում՝ 2 դարակաշար (արտաքին չափերը՝ Լ39*Բ26սմ): Դիմադիրի չափերը՝ Բ60*Լ60*Ե85սմ, 18մմ հաստությամբ երկշերտ լամինատից պատրաստված, եզրերը պատված կլինեն 3.6սմ հաստությամբ ՄՃՓ-ի պրոֆիլներով: Հավաքածուի բոլոր դռները և դարակաշարի եզրերը պատված կլինեն պոլիվինիլքլորիդային թերմոպլաստե եզրաշերտերով: Դարակների ուղղորդիչները՝ պարտադիր կլինեն բարդ գնդիկավոր-վակումային տեսակի, դռների ծխնինները՝</p> |

վակոււմային բարդ մեխանիզմներով: Հավաքածուն ներառում է նաև գրապահարան, պատրաստված 18մմ հաստությամբ լամինատից, չափերը՝ ք200սմ\*լ170սմ\*խ40սմ: Գրապահարանը բաղկացած է երկու հավասարաչափ մասերից /յուրաքանչյուրը 85սմ/, աջ կողմը՝ լամինատե 2 դռներով, որի մի հատվածը պետք է նախատեսված լինի հագուստի համար՝ համապատասխան կախիչներով, իսկ մյուս հատվածը՝ առնվազն 4 դարակաշարերով, ընդ որում, դարակաշարերի և հագուստի համար նախատեսված հատվածները բաժանված կլինեն լամինատե միջնապատով: Ձախ կողմի վերնամասը՝ ապակյա երկու դռներով, 3 լամինատե դարակաշարերով, իսկ ստորին հատվածը՝ լամինատե երկու փոքր դռնակներով, 2 լամինատե դարակաշարերով: Պահարանի եզրամասերը պատված են պոլիվինիլքլորիդային թերմոպլաստե եզրաշերտերով, դռների ծխնիները՝ վակոււմային բարդ մեխանիզմներով: Բոլոր դռները կունենան որակյալ և ամուր բռնակներ: Ապրանքի տեսքը կհամապատասխանի ներկայացված նմուշին կամ կբավարարի տեխնիկական բնութագրով ներկայացված պահանջներին: Ապրանքի պատրաստման համար օգտագործվող նյութերը կլինեն նոր (չօգտագործված): Հավաքածուի գույնը և տեսքը կհամապատասխանեն հրավերով ներկայացված նկարներին, իսկ անհրաժեշտության դեպքում նմուշին կծանոթանանք ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4 հասցեում, Մասիսի համայնապետարանի վարչական շենքում:





